

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հունվարի 9-ին և 2019 թվականի ապրիլի 15-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ կառավարման միջոցով» ֆինանսավորման համաձայնագրի թիվ 2 լրացման անգլերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
Արտաքին գործերի նախարարություն



## **ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 2 ԼՐԱՑՈՒՄ**

**Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին.  
Ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ  
կառավարման միջոցով**

**ԵՀԳ/2016/039-595**

### **ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Եվրոպական հանձնաժողովը, այսուհետ՝ **Հանձնաժողով**, գործելով  
Եվրոպական միության անունից, այսուհետ՝ **ԵՄ**,

մի կողմից, և

Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ **Գործընկեր երկիր**, ի դեմս  
Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների  
նախարարության,

մյուս կողմից,

համաձայնեցին հետևյալի վերաբերյալ.

«Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման  
բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի  
արդյունավետ կառավարման միջոցով» ԵՀԳ/2016/039-595 ֆինանսավորման  
համաձայնագրի հետևյալ դրույթները, որոնք ուժի մեջ են մտել 2017թ. փետրվարի  
20-ին, սույնով փոփոխվում են հետևյալ կերպ.

#### **Հոդված 1. Գործողության բնույթը**

1.1. Սույն գործողության ընդհանուր գնահատված արժեքը կազմում է  
20 125 000 եվրո և սույն գործողության մասով ԵՄ օժանդակության  
առավելագույն չափը սահմանված է 20 000 000 եվրո:

Բյուջետային աջակցության սույն գործողությունը բաղկացած է՝

ա) բյուջետային աջակցության բաղադրիչից՝ առավելագույնը 12 000 000  
եվրո ԵՄ օժանդակությամբ.

բ) լրացուցիչ աջակցության բաղադրիչից՝ 8 125 000 եվրո ընդհանուր  
գնահատված արժեքով, և առավելագույնը 8 000 000 եվրո ԵՄ  
օժանդակությամբ :

## Հոդված 5. Հավելվածները

Հավելված I-ի նոր տարբերակը՝ Տեխնիկական և վարչական դրույթներ, կցված է սույն լրացումանը:

Ֆինանսավորման համաձայնագրի մյուս բոլոր դրույթներն ու պայմանները մնում են անփոփոխ: Սույն լրացումը կազմելու է Ֆինանսավորման համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնելու այն օրը, երբ Հանձնաժողովը Շահառուի կողմից ստանում է սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը Շահառուի կողմից կատարելը հաստատելու մասին ծանուցում:

Կատարված է անգլերեն լեզվով՝ 2 բնօրինակից. 1 օրինակը հանձնվում է Հանձնաժողովին և 1 օրինակը՝ Շահառուին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝

ՇԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ

Անունը՝ Լուսինա Մերեդիթ

Անունը՝ Տիգրան Խաչատրյան

Պաշտոնը՝ Արևելյան  
հարևանության տնօրեն

Պաշտոնը՝ ՀՀ տնտեսական  
զարգացման և ներդրումների  
նախարար

Հարևանության և բանակցությունների  
ընդլայնման հարցերով  
Գլխավոր տնօրինություն  
Եվրոպական հանձնաժողով

ԵՄ աջակցության ազգային  
համակարգող

Ստորագրություն՝

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝ 09.01.2019

Ամսաթիվ՝ 15.04.2019

**Լրացում թիվ 2 2016/39595 Որոշմանը «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ կառավարման միջոցով»**

**Հավելված I «Տեխնիկական և վարչական դրույթներ»**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (ՏՎԴ-ՆԵՐ)**

<b>1. Վերնագիր /հիմնական ակտ/ CRIS համար</b>	<p><b>«Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ և պատասխանատու հանրային կառավարման միջոցով»</b></p> <p>CRIS [Արտաքին կապերի ընդհանուր տեղեկատվական համակարգ] համարը՝ ENI/2016/039-595</p> <p>Ֆինանսավորվում է Եվրոպական հարեանության գործիքի ներքո</p>
<b>2. Գոտին, հոգուտ որի իրականացվում է գործողությունների ծրագիրը/վայրը</b>	<p>Արեւելյան հարեանություն, Հայաստան</p> <p>Գործողությունը իրականացվելու է հետեւյալ վայրում՝ Հայաստան</p>
<b>3. Ծրագրային փաստաթուղթ</b>	<p>2014-2017 թվականներին ԵՄ կողմից Հայաստանին աջակցության տրամադրման համար Աջակցության միասնական մեխանիզմ</p>
<b>4. Թիրախային ոլորտ/թեմատիկ բնագավառ</b>	<p>Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներ</p>
<b>5. Տրամադրվող</b>	<p>Ընդհանուր գնահատված արժեքը՝ 20 125 000 եվրո</p>

<b>գումարներ</b>	<p>ԵՄ-ի բյուջետային ներդրման ընդհանուր գումարը՝ 20 000 000 եվրո, որից՝</p> <p>12 000 000 եվրո՝ բյուջետային աջակցության համար եւ 8 000 000 եվրո՝ լրացուցիչ աջակցության համար</p> <p>Սույն գործողությունը համաֆինանսավորվում է հնարավոր դրամաշնորհների շահառուների (ոչ Հայաստանի կառավարության) կողմից՝ 125 000 եվրո նախանշված գումարի չափով:</p>			
<b>6. Օգնության մեթոդ(ներ)ը եւ իրականացման մեթոդ(ներ)ը</b>	<p>Ուղղակի կառավարում. բյուջետային աջակցություն՝ Ոլորտային բարեփոխումների պայմանագիր, դրամաշնորհներ՝ թվինինգ նախագծ(եր)ի հայտ ներկայացնելու առաջարկ, դրամաշնորհներ՝ ուղղակի տրամադրում. ծառայությունների ձեռքբերում</p> <p>Անուղղակի կառավարում ՄԱԶԾ-ի հետ</p>			
<b>7. ԶԱԿ [Զարգացման աջակցության կոմիտե] ծածկագիրը (ծածկագրերը)</b>	15110 — Հանրային հատվածի քաղաքականություն եւ վարչական կառավարում			
<b>8. Ցուցիչներ (վերցված CRIS համակարգի ԶԱԿ ձեւից)</b>	<b>Ընդհանուր քաղաքականության նպատակ</b>	<b>Ոչ թիրախային</b>	<b>Կարելի է նպատակ</b>	<b>Հիմնական նպատակ</b>
	Մասնակցության ակտիվացում/ արդյունավետ կառավարում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	X
	Աջակցություն շրջակա միջավայրի	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

	պահպանմանը			
	Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն (ներառյալ զարգացման ծրագրերում կանանց ներգրավվածությունը)	<input type="checkbox"/>	X	<input type="checkbox"/>
	Առետրի զարգացում	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Վերարտադրողական, մոր, նորածնի եւ երեխայի առողջություն	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	<b>Ռիոյի կոնվենցիայի ցուցիչները</b>	<b>Ոչ թիրախային</b>	<b>Կարելու է նպատակ</b>	<b>Հիմնական նպատակ</b>
	Կենսաբազմազանություն	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Պայքար անապատացման դեմ	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Կլիմայական փոփոխությունների մեղմացում	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	Հարմարեցում կլիմայական փոփոխություններին	X	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<b>9. Գլոբալ հանրային բարիքներ եւ</b>	ԱՌԿԱ ՉԵՆ			

<b>մարտահրավերներ (ԳՀԲՄ) ծրագրից բխող կարելիություն թեմատիկ խնդիրները</b>	
---	--

### Ամփոփ նկարագիր

Ծրագիրը համահունչ է 2014-2017 թվականներին ԵՄ կողմից Հայաստանին աջակցություն տրամադրելու համար Աջակցության միասնական մեխանիզմին (ԱՄՄ) եւ Հանրային կառավարման բարեփոխումներ (ՀԿԲ) իրականացնելու ուղղությամբ Հայաստանի հանձնառությանը՝ արտացոլված ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում եւ ռազմավարական տարբեր թեմատիկ փաստաթղթերում: Ծրագիրը համահունչ է նաեւ ԵՀՔ ուսումնասիրությանը՝ մասնավորապես քաղաքականության մշակման եւ համակարգման կարողությունները բարելավելու, քաղաքացիական ծառայությունն ապաքաղաքականացնելու, ծառայությունների մատուցումն ու էլեկտրոնային կառավարումը զարգացնելու եւ ինստիտուցիոնալ թափանցիկությունը, հաշվետվողականությունը բարձրացնելու անհրաժեշտության մասով: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը դիտվում է որպես առանցքային կարելիության միջուկը տային հարց:

Ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական հանրային կառավարման բարեփոխումների օրակարգին՝ բարձրացնելու համար Հայաստանի կենտրոնական հանրային կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ արդյունավետությունը՝ ելնելով քաղաքացիների եւ գործարարության կարիքներից եւ համահունչ մնալով հանրային կառավարման սկզբունքներին, որոնք բխում են արդյունավետ կառավարման միջազգային չափանիշներից:

Ծրագրի հատուկ նպատակներն են՝ 1) կենտրոնական հանրային կառավարման մակարդակում քաղաքականության ու օրենսդրության պլանավորման եւ համակարգման խթանում. 2) քաղաքացիական ծառայությունում պրոֆեսիոնալիզմի

բարձրացում եւ արդյունավետ գործունեության ապահովում. 3) հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարեվարքության եւ հրապարակայնության մակարդակի բարձրացում. եւ 4) էլեկտրոնային կառավարման միջոցով հանրային ծառայությունների մատուցման բարելավում: Ծրագիրը հիմնականում կաջակցի կենտրոնական հանրային կառավարման բարեփոխումներին: Այն կաջակցի Կառավարության աշխատակազմի ղեկավարի գրասենյակին<sup>1</sup> որպես Հայաստանի Հանրապետությունում ՀԿԲ գործընթացի համակարգող: Այն նորարարական եւ մասնակցային մեթոդներով կխթանի նաեւ քաղաքացիների լիարժեք մասնակցությունն ու ներգրավվածությունը՝ որպես հանրային ծառայությունների վերջնական շահառուներ/ծառայություններից օգտվողներ:

Ծրագիրն իրականացվելու է բյուջետային աջակցության եւ լրացուցիչ աջակցության համադրման միջոցով: Լրացուցիչ աջակցության դեպքում շեշտը դրվելու է միջազգային եւ եվրոպական լավագույն փորձի հիման վրա տեխնիկական աջակցություն տրամադրելու վրա: Հատուկ աջակցություն է հատկացվելու տեսանելիության միջոցառումներին: Ծրագիրը համահունչ կլինի այլ այնպիսի զարգացման գործընկերների գործունեությանը, ինչպիսիք են Համաշխարհային բանկը (ՀԲ), ԳՄՀԸ-ն եւ ՏՀԶԿ/ՄԻԳՄԱ-ն:

---

<sup>1</sup> Աշխատակազմի ղեկավարի գրասենյակի հիմնական պարտականությունն է՝ աջակցել վարչապետին եւ համակարգել կառավարության մարմինների աշխատանքը կառավարության կենտրոնական ապարատում: Այն համակարգում է օրենսդրական առաջարկություններն ու հետետում կառավարության աշխատանքային ծրագրի իրականացմանը: ([http://gov.am/u\\_files/file/documents/Gov-CHARTER-2015.pdf](http://gov.am/u_files/file/documents/Gov-CHARTER-2015.pdf))



# 1. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 1.1. Նպատակները/արդյունքները

Ծրագիրն աջակցում է Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման բարեփոխումների օրակարգին:

**Ընդհանուր նպատակն** է բարձրացնել Հայաստանի կենտրոնական հանրային կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ արդյունավետությունը՝ ելնելով քաղաքացիների եւ գործարարության կարիքներից:

Ծրագրի **հատուկ նպատակներն** ու արդյունքները հետեւյալն են՝

**Նպատակ 1. Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում այնպիսի քաղաքականության ու օրենսդրության մշակման եւ համակարգման խթանում, որը կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարթակ է ապահովում**

*Արդյունք 1.1. Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում քաղաքականության ու օրենսդրական պլանավորման եւ համակարգման բարելավված կարողություններ*

*Արդյունք 1.2. Ներառական եւ փաստերով հիմնավորված քաղաքականության եւ օրենսդրության մշակման հարցում բարելավված կարողություններ*

**Նպատակ 2. Քաղաքացիական ծառայությունում պրոֆեսիոնալիզմի բարձրացում եւ արդյունավետ գործունեության ապահովում**

*Արդյունք 2.1. Մարդկային ռեսուրսների կառավարման ավելի մասնագիտացած եւ արժանիքների վրա հիմնված համակարգի առկայություն, որը նպաստում է քաղաքացիական ծառայությունում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանը*

*Արդյունք 2.2. Քաղաքացիական ծառայողների պատրաստման եւ*

կարողությունների զարգացման առավել արդիական հնարավորությունների առկայություն՝ համակցված մարդկային ռեսուրսների՝ կանանց և տղամարդկանց հավասարության առումով հավասարակշռված պլանավորման, կատարողականի գնահատման եւ առաջխաղացման համակարգի հետ

**Նպատակ 3. Հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարեվարքության եւ հրապարակայնության մակարդակի բարձրացում**

Արդյունք 3.1. Հանրային կառավարման նկատմամբ քաղաքացիների վստահության առավել բարձր մակարդակ

Արդյունք 3.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին եւ էթիկայի հարցերով այլ հանձնաժողովներին ցուցաբերվող աջակցության միջոցով հանրային ոլորտում բարեվարքության առավել բարձր մակարդակ

Արդյունք 3.3. Տեղեկատվության հասանելիության եւ անձնական տվյալների նկատմամբ հսկողության ոլորտում քաղաքացիների իրավունքների ընդլայնում

**Նպատակ 4. Էլեկտրոնային կառավարման միջոցով հանրային ծառայությունների մատուցման բարելավում**

Արդյունք 4.1. Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի կարողությունների ընդլայնում

Արդյունք 4.2. Կառավարության կողմից էլեկտրոնային նույնականացման քարտով տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների ներմուծում եւ վերանայված համապատասխան վարչական ընթացակարգեր

Արդյունք 4.3. Առողջապահության ոլորտում կառավարության կողմից

*տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների ներմուծում եւ վերանայված համապատասխան վարչական ընթացակարգեր*

## **1.2. Հիմնական գործողությունները**

### **1.2.1. Բյուջետային աջակցությունը**

Բյուջետային աջակցությունը կկենտրոնանա ծրագրի բոլոր չորս բաղադրիչների նպատակներն իրագործելու վրա: Վերոնշյալ 1-4 նպատակների ներքո շարադրված արդյունքներին համահունչ՝ աջակցությունը կկենտրոնանա կենտրոնական հանրային կառավարման քաղաքականության մշակումը եւ համակարգումը խթանելու, վերապատրաստման կարողությունների զարգացման եւ արժանիքների վրա հիմնված քաղաքացիական ծառայության զարգացման միջոցով քաղաքացիական ծառայության պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու, հանրային կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը բարձրացնելու եւ քաղաքացիական հասարակության մասնակցության համար հասանելիություն ապահովելու, ինչպես նաեւ էլեկտրոնային կառավարման ժամանակակից եւ արդի լուծումներ ներդնելու վրա՝ ապահովելու համար հանրային ծառայությունների մատուցման հնարավոր ամենաբարձր մակարդակը:

Մասնավորապես, բյուջետային աջակցության մոտեցմամբ կկարգավորվի ՀԿԲ-ի համակարգումը Հայաստանի ամբողջ հանրային ոլորտում՝ խթանելով առավել հետետղական ինստիտուցիոնալ մոտեցում՝ Կառավարության աշխատակազմի գրասենյակի գլխավորությամբ:

### **1.2.2 Լրացուցիչ աջակցություն**

- Աջակցություն ծրագրի էլեկտրոնային ծառայություններ բաղադրիչին՝ մասնավորապես էլեկտրոնային նույնականացման ծառայությունների զարգացման եւ էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքի մեջ տարբեր հանրային ծառայությունների ինտեգրման նպատակով: Տեխնոլոգիական նոր

լուծման եւ ընթացակարգի ներդրմամբ կգործարկվեն արդեն իսկ գոյություն ունեցող էլեկտրոնային նույնականացման համակարգերը՝ ինտեգրելով տարբեր էլեկտրոնային տվյալների բազաները: Այն նաեւ կնպաստի հանրային կառավարման հաշվետվողականության եւ քաղաքացիների՝ ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահության բարձրացմանը՝ ներդնելով քվեարկողների գրանցման եւ նույնականացման նոր տեխնոլոգիաներ.

- ՀԿԲ-ում, հատկապես՝ քաղաքականության մշակման եւ համակարգման եւ քաղաքացիական ծառայության կառավարման բնագավառներում ներգրավված՝ ընտրված հայաստանյան կառույցների կարողությունների բարելավում: Այդ կառույցների թվում կարող են լինել համապատասխան պետական կառույցները, Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը եւ այլք: Ընտրված Անդամ պետության գործակալությունը կկիսվի փորձառությամբ եւ ԵՄ լավագույն փորձով՝ միեւնույն ժամանակ օժանդակելով համապատասխան ընթացակարգեր, կանոնակարգեր եւ ուղեցույցներ մշակելու հարցում.

- ըստ անհրաժեշտության տեխնիկական աջակցության տրամադրում ՀԿԲ բնագավառում, ինչպես նաեւ հատկացումների տարեկան թիրախների վերանայում:

### **1.3. Միջամտության տրամաբանությունը**

Սույն ծրագիրը կաջակցի Հայաստանի կառավարությանը հանրային կառավարման բարեփոխումներ իրականացնելու հարցում՝ համաձայն ՀԶՌ-ի, ինչպես նաեւ հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում այլ առանցքային ռազմավարական փաստաթղթերի, այդ թվում՝ 2016-2020 թվականների քաղաքացիական ծառայության բարեփոխումների ռազմավարության եւ գործողությունների ծրագրի, 2015-2018 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության եւ գործողությունների ծրագրի եւ 2014-2018 թվականների էլեկտրոնային կառավարման գործողությունների ծրագրի

համաձայն:

Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում **քաղաքականության մշակման եւ համակարգման** ոլորտում, հիմնվելով Համաշխարհային բանկի եւ ԵԱՀԿ-ի շարունակական աջակցության վրա, ծրագիրն ուղղված է լինելու քաղաքականության մշակման համակարգի զարգացման հարցում կենտրոնական կառավարման մարմիններին աջակցելուն՝ շեշտը դնելով քաղաքականության եւ օրենսդրության մշակման ընթացքում առավել ներառական մոտեցման կիրառման վրա: Բացի դրանից, ծրագիրը կաջակցի կառավարությանը ներառական եւ փաստերով հիմնավորված քաղաքականության եւ օրենսդրության մշակման հարցում: Փաստերով հիմնավորված քաղաքականության մշակման երկու գլխավոր բաղադրիչները կկենտրոնանան՝ 1) քաղաքականության մշակման փաստաթղթերի առնչությամբ մոնիթորինգի իրականացման եւ համապատասխան մոնիթորինգային հաշվետվությունների հրապարակման վրա, որոնք որպես փաստական աղբյուրներ օգտագործվում են հետազայում քաղաքականություն մշակելիս, եւ 2) քաղաքականության մշակման եւ իրավական զարգացման ընթացքում ազդեցության գնահատման ժամանակակից մեթոդաբանությունների ներդրման վրա: Այս միջամտությունը կնպաստի քաղաքականության եւ իրավական զարգացման առավել արդյունավետ մոտեցումների ներդրմանը, ինչպես նաեւ համակարգման մեխանիզմների ընդլայնմանը:

Ծրագրով կշարունակվեն **հանրային ծառայությունների եւ մարդկային ռեսուրսների կառավարման** ոլորտում ԵՄ ջանքերը՝ ուղղված Հայաստանում արժանիքների վրա հիմնված եւ պրոֆեսիոնալ քաղաքացիական ծառայությունների համակարգի զարգացմանը աջակցելուն: Ծրագիրը կաջակցի քաղաքացիական ծառայությունում կարողությունների եւ արժանիքների հիման վրա աշխատանքի ընդունման եւ առաջխաղացման համակարգերի զարգացմանը՝ Հայաստանի քաղաքացիական ծառայության բարեփոխումների նոր ռազմավարությանը համահունչ: Կտրամադրվի աջակցություն՝ պաշտոնների անձնագրերի առկա պրակտիկան պաշտոնների դասակարգման նոր



համակարգով փոխարինելու հարցում: Քաղաքացիական ծառայողների շարունակական մասնագիտական զարգացումը առաջնահերթություն է Հայաստանի, ինչպես նաև ԵՄ առաջիկա աջակցության ծրագրերի համար: Ծրագրի շրջանակներում աշխատանք կտարվի իրական կարիքների վրա հիմնված վերապատրաստման համակարգի զարգացման ուղղությամբ, որը փոխկապակցված կլինի մարդկային ռեսուրսների պլանավորման, գործունեության արդյունքների գնահատման հետ: Տրամաբանությունը քաղաքացիական ծառայության համակարգում վերապատրաստման կարիքների վերլուծության համակարգ ներդնելու մեջ է եւ ապահովելու, որ վերապատրաստման բոլոր պարտադիր մոդուլները վերապատրաստման կարիքների գնահատումների արդյունքներին համահունչ մշակվեն:

Հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարելավելության եւ հրապարակայնության հարցում ծրագիրը կաջակցի Բաց կառավարման գործընկերության 3-րդ եւ 4-րդ գործողությունների ծրագրերի (2016-2018, 2018-2020 թվականներ) իրականացմանը: Այն նաև կաջակցի Կառավարության՝ քվեարկողների գրանցման եւ նույնականացման նոր տեխնոլոգիաներ ներդնելու որոշման իրագործմանը՝ հանրային կառավարման նկատմամբ քաղաքացիների վստահությունը բարձրացնելու նպատակով, բարելավելով ընտրողների ցուցակների ճշգրտությունը եւ ընտրական գործընթացի կառավարումը: Ծրագիրը նաև կօժանդակի Անձնական տվյալների պաշտպանության գործակալության ինստիտուցիոնալ եւ մարդկային ռեսուրսների կարողություններին եւ կբարձրացնի Գործակալության անկախության մակարդակը: Ի վերջո, այն կաջակցի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին եւ այլ պետական մարմինների կազմում գործող էթիկայի հարցերով հանձնաժողովներին, ի թիվս այլնի, գործերի քննության եւ ռիսկերի գնահատման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հարցում:

**Ծառայությունների մատուցման** ոլորտում ծրագիրը կկենտրոնանա էլեկտրոնային կառավարման վրա եւ կաջակցի էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին (ԷԿԵՆԳ), ինչպես նաև էլեկտրոնային գործիքների միջոցով կբարելավվի հանրային ծառայությունները՝

շեշտը դնելով հատկապես էլեկտրոնային նույնականացման քարտերի վրա: Զուգահեռաբար, ծրագիրը կհիմնվի Համաշխարհային բանկի կողմից մշակված պիլոտային աշխատանքի՝ էլեկտրոնային առողջապահության վրա՝ քաղաքացիների համար ընդհանրացված թվային բժշկական քարտեր, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության կառավարման գործիքներ եւ մոդուլներ ներդնելու համար՝ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև համակարգի հաշվետվողականությունը եւ արդյունավետությունը Հայաստանի՝ 2015-2020 թվականների առողջապահական քաղաքականության համակարգի զարգացման հայեցակարգին համահունչ բարելավելու նպատակով:

## **2. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

### **2.1. Բյուջետային աջակցության բաղադրիչի իրականացումը**

#### **2.1.1. Բյուջետային աջակցության նպատակով հատկացված գումարների հիմնավորումը**

Բյուջետային աջակցության նպատակով հատկացված գումարը 12 միլիոն եվրո է՝ հիմնվելով հետեւյալ տարրերի վրա՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ներպետական բյուջետային միջոցները ՀՀՌ-ին եւ առկա ոլորտային ռազմավարություններին համահունչ բաշխելու՝ փորձով հաստատված հանձնառությունը (Քաղաքացիական ծառայության բարեփոխումներ, ԲԿԳ, էլեկտրոնային կառավարում)։
- Կառավարության «կլանելու» կարողությունները, ինչի մասին վկայում է բյուջետային աջակցության իրականացման նախկին փորձը, առաջարկվում է այնպիսի բնագավառների համար, որտեղ ի ցույց է դրվել քաղաքականության մեխանիզմի, բարեփոխումների համակարգման եւ պատասխանատվության անհրաժեշտ մակարդակ:

Չնայած, որ ծրագրի թիրախավորված երեք բաղադրիչների հիմքում ընկած են ուժեղ ռազմավարական քաղաքականության փաստաթղթեր, միայն երկուսի մասով կա կազմված ծախսերի նախահաշիվ: Քաղաքացիական

ծառայության ռազմավարության արժեքը մասամբ գնահատվում է 1 միլիոն եվրոյից ավել գումարի չափով: Էլեկտրոնային կառավարման՝ սույն գործողությունների ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող գործողությունների արժեքը գնահատվում է 16 միլիոն եվրո, եւ այս բյուջետային աջակցության շրջանակներում դրանց համար կհատկացվի 8 միլիոն եվրոյի չափով աջակցություն: Պարզ է, որ առաջին եւ երրորդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմք հաստատելու համար կպահանջվեն լրացուցիչ ծախսեր՝ սկսած անձնական տվյալների պաշտպանության գործակալության, էթիկայի հանձնաժողովի կարողությունների ամրապնդումից մինչեւ համապատասխան օրենսդրական եւ ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացումը: Ի վերջո, սույն ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում ՀԿԲ-ի համար համապատասխան բյուջետային հատկացումներ ապահովելուն՝ կայուն եւ ընդլայնված երկխոսության միջոցով՝ նաեւ բարեփոխումների հետ կապված ծախսերի վերաբերյալ:

### ***2.1.2. Բյուջետային աջակցության տրամադրման չափանիշները***

ա) Բոլոր տրանշերի հատկացման համար գործում են հետեւյալ ընդհանուր պայմանները՝

- բավարար առաջընթաց Հայաստանի զարգացման ռազմավարությամբ նախատեսվող՝ հանրային կառավարման բարեփոխումների (Գլուխ X) իրականացման գործում եւ դրա շարունակական վստահելիությունը եւ արդիականությունը.
- կայունության հաստատմանն ուղղված վստահելի մակրոտնտեսական քաղաքականության իրականացում.
- բավարար առաջընթաց Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ծրագրի իրականացման հարցում.
- բավարար առաջընթաց հանրությանը ժամանակին համապարփակ եւ

հուսալի բյուջետային տեղեկատվություն տրամադրելու հարցում:

բ) Փոփոխական տրանշերի դեպքում գործող հատկացման հատուկ պայմանները կախված կլինեն հատուկ նպատակների եւ ծրագրից ակնկալվող հիմնական արդյունքների իրագործումից: Կատարողականի առանձնացված թիրախներն ու ցուցանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն հատկացումների դեպքում, գործում են ծրագրի ամբողջ ընթացքում: Այնուամենայնիվ, պատշաճ հիմնավորված հանգամանքներում, Հայաստանի կառավարությունը կարող է դիմում ներկայացնել Հանձնաժողովին՝ թիրախները եւ ցուցանիշները փոփոխելու խնդրանքով: Թիրախներում եւ ցուցանիշներում համաձայնեցված փոփոխությունները կարող են թույլատրվել երկու կողմերի միջեւ գրությունների փոխանակման միջոցով:

Հիմնարար արժեքների էական քայքայման պարագայում բյուջետային աջակցության հատկացումները կարող են պաշտոնապես կասեցվել, ժամանակավորապես կասեցվել, նվազեցվել կամ չեղարկվել՝ ֆինանսավորման համաձայնագրի համապատասխան դրույթների համաձայն:

### **2.1.3. *Բյուջետային աջակցության մանրամասները***

Բյուջետային աջակցությունը տրամադրվում է որպես ուղղակի չթիրախավորված բյուջետային աջակցություն ազգային Գանձապետարանին (նախորոշված է երեք փոփոխական տրանշ): Հայկական դրամով հատկացվող եվրոյով փոխանցումներն իրականացվում են համապատասխան փոխարժեքներով՝ ֆինանսավորման համաձայնագրի համապատասխան դրույթների համաձայն:

## **2.2. Լրացուցիչ աջակցություն իրականացման մեթոդները**

### **2.2.1. Դրամաշնորհ՝ հայտամրցույթ(ներ) թվինինգ ծրագրի (ծրագրերի) համար (ուղղակի կառավարում)**

***ա) Դրամաշնորհի (դրամաշնորհների) նպատակները, միջամտության ոլորտները, տարվա առաջնահերթությունները եւ ակնկալվող արդյունքները***

Թվինինգ հայտամրցույթների հիմնական նպատակն է ուժեղացնել սույն ծրագրի՝ ՀԿԲ-ի չորս թեմատիկ բնագավառներում ներգրավված հայաստանյան կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները՝ ծրագրի արդյունքներին հասնելու նպատակով: Ծրագրի (ծրագրերի) շրջանակներում օժանդակություն կտրամադրվի Հայաստանի՝ աջակցություն հայցող գործընկերներին փորձառության եւ ԵՄ լավագույն փորձի փոխանակման միջոցով, ինչպես նաեւ կառավարման ենթակառուցվածք ստեղծելու, աշխատանքային գործընթացը, համապատասխան ստանդարտ գործառնական ընթացակարգերը կարգավորելու, կանոնակարգեր եւ ուղեցույցներ սահմանելու, ռազմավարությունների եւ քաղաքականության մշակման հարցերում օժանդակության տրամադրման միջոցով, որոնցում խնդիրները դիտարկվում են նաեւ կանանց և տղամարդկանց իրավահավասարության տեսանկյունից:

#### **բ) Թույլատրելիության պայմանները**

Թիվ 236/2014 կանոնակարգի (ԵՄ) 4(10)բ հոդվածի համաձայն՝ մասնակցությունը թվինինգ հայտամրցույթներին սահմանափակվում է ԵՄ անդամ պետությունների հանրային կառավարման մարմիններով, որի տակ պետք է հասկանալ անդամ պետությունների կենտրոնական կամ շրջանային իշխանություններ, ինչպես նաեւ վերջիններիս մարմինները եւ վարչական կառույցները, ինչպես նաեւ մասնավոր անձինք, որոնց վերապահված է հանրային ծառայության գործառույթ՝ իրենց վերահսկողության ներքո՝ պայմանով, որ նրանք գործում են այդ անդամ պետության միջոցների հաշվին եւ դրա պատասխանատվության ներքո:

#### **գ) Ընտրության եւ տրամադրման հիմնական չափանիշներ**

Ընտրության հիմնական չափանիշն դիմողի գործառական կարողություններն են:

Տրամադրման հիմնական չափանիշներն են դիմողի մասնագիտացվածության ոլորտը եւ առաջարկվող գործողության համապատասխանությունը, մեթոդաբանությունը եւ իրագործելիությունը:



**դ) Համաֆինանսավորման առավելագույն սահմանը**

Թվինինգ դրամաշնորհի պայմանագրերի դեպքում համաֆինանսավորման չափը 100 տոկոս է:<sup>2</sup>

**ե) Մրցույթի մեկնարկի նախանշված ժամկետները**

2017 թվականի չորրորդ եռամսյակ:

**զ) Միանվագ գումարների, հաստատուն դրույքաչափերի, միավոր արժեքների օգտագործումը**

Հանրային ոլորտում անդամ պետությունների՝ հանրային կառավարման ընտրված մարմինների կողմից տրամադրվող մասնագիտական ռեսուրսների դիմաց փոխհատուցման նպատակով թվինինգ պայմանագիրը ներառում է միավոր արժեքների եւ հաստատուն դրույքաչափերով ֆինանսավորման համակարգ՝ սահմանված Թվինինգի ձեռնարկին համապատասխան: Եթե միավոր արժեքների եւ հաստատուն դրույքաչափերով ֆինանսավորման այս համակարգի օգտագործմամբ Թվինինգ պայմանագրի յուրաքանչյուր շահառուին հատկացման ենթակա գումարը գերազանցում է 60 000 եվրոն, ապա Հանձնաժողովի կողմից այդ մասին պետք է ընդունվի առանձին հորիզոնական որոշում:

**2.2.2. Դրամաշնորհ՝ ուղղակի տրամադրում Էստոնիայի էլեկտրոնային կառավարման ակադեմիային (ուղղակի կառավարում)**

**ա) Դրամաշնորհի նպատակները, միջամտության ոլորտները, տարվա առաջնահերթությունները եւ ակնկալվող արդյունքները**

Սույն դրամաշնորհի նպատակները հետեւյալն են՝

- բարելավել էլեկտրոնային կառավարման կառավարման կարողությունները

---

<sup>2</sup> Ինչպես նախատեսված է Թվինինգի ձեռնարկով:

- թվային նույնականացման ծառայությունների զարգացման, էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքներում դրանց ներգրավվածության եւ էլեկտրոնային ինքնության ստացման եւ օգտագործման զարգացման միջոցով բարելավել հանրային ծառայության մատուցումը
- էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցով բարելավել հանրային ծառայությունը
- նորարարական եւ մասնակցային գործելակերպերի միջոցով բարելավել քաղաքականության մշակումը եւ իրականացումը

Հետեւյալ ակնկալվող արդյունքներով՝ բարելավել է էլեկտրոնային կառավարման ներդրումների կայունությունը եւ արդյունավետություն, կառավարական էլեկտրոնային ծառայությունները զարգացում են ապրել եւ ներգրավվել էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքներում, էլեկտրոնային առողջապահության թվային ռեսուրսները եւ ծառայությունները գործուն են. էլեկտրոնային առողջապահության կառավարման համակարգերը գործուն են, նորարարական քաղաքականությունն իրականացվում է ծառայությունների բարելավված մատուցման համար մասնակցության միջոցով:

#### ***բ) Ուղղակի դրամաշնորհի հիմնավորումը***

Հանձնաժողովի լիազոր պատասխանատու պաշտոնյայի պատասխանատվության ներքո, դրամաշնորհը կարող է տրամադրվել առանց էստոնիայի էլեկտրոնային կառավարման ակադեմիային հայտամրցույթ ներկայացնելու:

Հանձնաժողովի լիազոր պատասխանատու պաշտոնյայի պատասխանատվության ներքո, դրամաշնորհի տրամադրման համար առանց հայտամրցույթի դիմելը հիմնավորված է, քանի որ նման գործողությունն ունի հատուկ բնութագրեր, որոնք իրենց տեխնիկական իրավասության համար պահանջում են շահառուի հատուկ տեսակ եւ մասնագիտացում Թիվ 1268/2012 Հանձնաժողովին պատվիրակված կանոնակարգման (ԵՄ) 190-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն:

Էլեկտրոնային կառավարման ակադեմիան (ԷԿԱ) ունի անցումային տնտեսությունների էլեկտրոնային կառավարման ոլորտում զարգացած հատուկ փորձ՝ հաշվի առնելով հատկապես Էստոնիայի՝ շատ սահմանափակ ռեսուրսներով կենտրոնացած հանրային կառավարման խնդիրները հաջողությամբ լուծելու յուրահատուկ փորձը: Թվային հանրության զարգացմամբ բերված թափանցիկության շնորհիվ այն հիմա ամենաքիչ կոռումպացված հետխորհրդային պետությունն է՝ աշխարհում էլեկտրոնային կառավարման զարգացման առաջնային շարքերում: ԷԿԱ-ն ունի ոչ միայն տեխնիկական իրականացման ոլորտում, այլև հարակից քաղաքականությունների, օրենսդրության եւ կանոնակարգման զարգացման վերաբերյալ գիտելիքների փոխանակման հատուկ փորձ: Հատուկ աջակցության բնագավառները, որոնք նախատեսված են, տրամադրվելու 2016 թվականի ՏԳԾ-ի ընթացքում, ԷԿԱ-ի կողմից ձեռք բերված փորձի առանցքային բնագավառներն են՝ հիմնված էլեկտրոնային նույնականացման քարտի ներդրման եւ փոխգործակցության համակարգի վրա, որը ձեւավորում է Էստոնիայում էլեկտրոնային կառավարման եւ ներգրավված էլեկտրոնային ծառայությունների մատուցման հիմքը: Սա մասնավորապես էական է, քանի որ Հայաստանը կայացրել է իր փոխգործակցության համակարգի զարգացման համար Էստոնիայի ապակենտրոնացված ուղու մոտեցումն ընտրելու ռազմավարական որոշում (Հայաստանի էլեկտրոնային կառավարման գործողությունների ծրագիր): Հայաստանը նաեւ կիրառում է բոլոր քաղաքացիներին էլեկտրոնային նույնականացման քարտեր տրամադրելու գաղափարը՝ ապահովելով էլեկտրոնային կառավարման ոլորտում ամբողջ կառավարության միասնական մոտեցման հիմքը:

Ի հավելումն, էլեկտրոնային նույնականացման քարտերը հիմք են դնում հետագայում հնարավոր էլեկտրոնային ընտրությունների համար, որոնք հիմնված են էլեկտրոնային նույնականացման քարտերի կառավարման վրա եւ հանդիսանում են ԷԿԱ-ի հատուկ տեխնիկական իրավասություն: Էստոնիան առաջին պետությունն էր, որը 2005 թվականին համացանցի միջոցով անցկացրեց

իրավաբանորեն պարտադիր ընդհանուր ընտրություններ, 2015 թվականին համացանցի միջոցով քվեարկությունն արդեն հասել էր 30,5 %-ի: Որպես ԵՄ անդամ պետության կազմակերպություն, որն ունի ապացուցված դրական արդյունքների արձանագրություն, եւ որին վստահվել է Էստոնիայի փորձով փոխանակվելու առաքելությունը, ԷԿԱ-ն լայնորեն կնպաստեր Հայաստանում ինքնության կառավարման նկատմամբ վստահության կառուցմանը, որն էլեկտրոնային կառավարման առանցքային ենթակառուցվածքն է:

**գ) Ընտրության եւ տրամադրման հիմնական չափորոշիչները**

Ընտրության հիմնական չափորոշիչներն են դիմողի ֆինանսական եւ գործառնական կարողությունները:

Տրամադրման հիմնական չափորոշիչներն են առաջարկվող գործողության համապատասխանությունը հայտամրցույթի նպատակներին, գործողության արդյունավետությունը, իրագործելիությունը, կայունությունը եւ ծախսարդյունավետությունը:

**դ) Համաֆինանսավորման առավելագույն չափը**

Սույն դրամաշնորհի համար համաֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը 80%-ն է:

Թիվ 966/2012 Կանոնակարգի (ԵՄ, Եվրատոմ) 192-րդ հոդվածի համաձայն՝ եթե գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ է ամբողջական ֆինանսավորում, ապա ֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը կարող է բարձրացվել մինչեւ 100%-ի: Ամբողջական ֆինանսավորման անհրաժեշտությունը հիմնավորվում է դրամաշնորհի որոշման համար Հանձնաժողովի լիազոր պաշտոնյայի կողմից՝ հավասար վերաբերմունքի եւ սահուն ֆինանսական կառավարման սկզբունքներին համապատասխան:

**ե) Դրամաշնորհի համաձայնագիրը կնքելու նախանշված եռամսյակը**

*2018 թվականի 1-ին եռամսյակ*

### 2.2.3. Գնումներ (ուղղակի կառավարում)

Առարկան	Տեսակը (աշխատանքներ, մատակարարումներ, ծառայություններ)	Պայմանագրերի նախանշված թիվը	Ընթացակարգի մեկնարկի նախանշված եռամսյակը
ՏԱ — Հանրային կառավարման բարեփոխումների համար կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ եւ պայմանների վերանայում	Ծառայությունները	3.	2017 թվականի 4-րդ եռամսյակ
Աուդիտ եւ գնահատում	Ծառայությունները	2.	2018 թվականի 2-րդ եռամսյակ
Հաղորդակցում եւ տեսանելիություն	Ծառայությունները	1.	2017 թվականի 4-րդ եռամսյակ

### 2.2.4. Անուղղակի կառավարում միջազգային կազմակերպության հետ

Սույն գործողության մի մասը կարող է իրականացվել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ անուղղակի կառավարմամբ՝ թիվ 966/2012 Կանոնակարգի (ԵՄ, Եվրատոմ) 58-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն: Այդ իրականացումը ենթադրում է աջակցություն ընտրական գործընթացին՝ ներառյալ դրա վստահելիության եւ թափանցիկության բարձրացում էլեկտրոնային լուծումների փուլային ներդրման միջոցով: Ի թիվս այլ նպատակների, որպես Հայաստանի ընտրական գործընթացի նկատմամբ վստահություն ձեւավորելու եւ կայուն լուծումներ խթանելու համար երկարաժամկետ ներդրում, ընտրողների ցուցակի օրինականությունը կբարելավվի էլեկտրոնային նույնականացման քարտի ներդրման միջոցով, որը նաեւ հիմք կհանդիսանա ընտրական գործընթացում հետագա էլեկտրոնային լուծումների ներդրման համար: Ընտրական նոր տեխնոլոգիաները կօգնեն լուծում տալ քվեարկողի գրանցման եւ արդյունքների կառավարման համակարգի խնդիրներին: Այդ ներդրումը հիմնավորված է ավելի քան 83 երկրներում, ներառյալ Հայաստանում, ընտրական համակարգերն ու գործընթացներն ուժեղացնելու ոլորտում ՄԱԶԾ-ի լայն փորձով, դրա՝ Հայաստանում կիրառվող կառավարման գործընթացների մանրակրկիտ



ըմբռնմամբ, անհրաժեշտ եւ հատուկ փորձն արագ մոբիլիզացնելու, ինչպես նաեւ մինչեւ ընտրությունները մնացած կարճ ժամանակը հաշվի առնելով պահանջվող գործառնական լուծումներն արագորեն ներդնելու դրա կարողությամբ:

Լիազորված անձը կատարում է բյուջեի կատարմանը վերաբերող հետեւյալ առաջադրանքները՝ պետական գնումների, դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի իրականացում, դրանցից բխող պայմանագրերի կնքում եւ կառավարում՝ ներառյալ դրանց վերաբերող վճարների կատարում:

Ելնելով 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման համար Հայաստանի կառավարությանն աջակցություն տրամադրելու հրատապությունից՝ լիազորված անձի կատարած ծախսերի իրավաչափությունը կարող է լիազորվել 2016 թվականի հուլիսի 1-ից:

### **2.3. Գնումների եւ դրամաշնորհների՝ աշխարհագրական առումով համապատասխանության շրջանակը**

Գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգերին մասնակցելու համար հաստատության վայրի եւ մատակարարվող ապրանքների ծագման առնչությամբ աշխարհագրական առումով համապատասխանությունը, որը սահմանված է հիմնական ակտում եւ համապատասխան պայմանագրային փաստաթղթերում, կիրառվում է հետեւյալ դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի լիազոր պատասխանատու պաշտոնյան կարող է ընդլայնել աշխարհագրական առումով համապատասխանության շրջանակը՝ թիվ 236/2014 կանոնակարգի (ԵՄ) 9-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ շահագրգիռ երկրների շուկաներում ապրանքների եւ ծառայությունների հրատապ անհրաժեշտությունից կամ անհասանելիությունից ելնելով, կամ պատշաճ կերպով հիմնավորված այլ դեպքերում, երբ համապատասխանության կանոնների պահպանմամբ անհնարին է դառնում կամ չափազանց դժվարանում է սույն գործողության իրականացումը:

## 2.4. Նախանշված բյուջե

	ԵՄ մասնակցություն (գումարը՝ մլն. Եվրոյով)	Երրորդ կողմի նախանշված մասնակցություն (գումարը՝ մլն. Եվրոյով)
<b>2.1 — Բյուջետային աջակցության ոլորտային բարեփոխումների պայմանագիր</b>	<b>12</b>	Առկա չէ
<b>2.2 — Լրացուցիչ աջակցություն</b>	<b>8</b>	<b>0.125</b>
2.2.1. — Հայտ (հայտեր) ներկայացնելու թվինինգ առաջարկներ՝ աջակցելու ՊԿԲ-ում ակտիվ կառույցներին (ուղղակի կառավարում)	2	Առկա չէ
2.2.2 — Ուղղակի դրամաշնորհի Էլեկտրոնային կառավարման ակադեմիայի հիմնադրամին (ուղղակի կառավարում)	0.5	0.125
2.2.3 — Գնումներ (ուղղակի կառավարում)	3.2	Առկա չէ
2.2.4 — Անուղղակի կառավարում ՄԱԶԾ-ի հետ	2.00	Առկա չէ
2.7 — Գնահատում, 2.8 — Աուդիտ	0.15	Առկա չէ
2.9 — Հաղորդակցում եւ տեսանելիություն	0.15	Առկա չէ
<b>Ընդամենը</b>	<b>20.00</b>	<b>0.125</b>

## 2.5. Կազմակերպական կառուցվածքը եւ պարտականությունները

Ընդհանուր ծրագրի վերահսկողությունը վերապահվելու է Ղեկավար կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի գրասենյակի հետ համատեղ նախագահությամբ: Ի թիվս այլոց, Ղեկավար կոմիտեում ներառված կլինեն Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, ԵՄ պատվիրակությունը, սույն ծրագրի իրականացման մեջ ներգրավված բոլոր նախարարությունների եւ կառույցների, ինչպես օրինակ՝ Առողջապահության նախարարության եւ Արդարադատության նախարարության, Քաղաքացիական ծառայության խորհրդի, ԷԿԵՆԳ-ի ներկայացուցիչները եւ համապատասխան ոչ պետական մարմինների եւ միջազգային կազմակերպությունների, ինչպես

օրինակ՝ ՀԲ-ի, ՄԱԶԾ-ի, ԳՄՀԸ-ի ներկայացուցիչները: Նման կառուցվածք կապահովի կառուցվածքային քաղաքականություն, տեխնիկական երկխոսություն եւ սերտ համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ ծրագրի իրականացման ընթացքում:

Կոմիտեն կհանդիպի առնվազն տարին մեկ անգամ՝ վերանայելու գրանցված առաջընթացը:

## **2.6. Կատարողականի մոնիթորինգը եւ հաշվետվությունը**

Կատարողականի մոնիթորինգի եւ հաշվետվության համակարգը կապված կլինի կառավարության ԴԳ համակարգի հետ, որն էլ ծրագիրը նպատակ ունի բարելավել: Մասնավորապես, յուրաքանչյուր ենթաոլորտային ռազմավարություն (օր.՝ էլեկտրոնային կառավարում, քաղաքացիական ծառայության բարեփոխումներ, ԲԿԳ եւ այլն) ներառում է ցուցիչներ եւ թիրախներ, որոնք կօգտագործվեն ծրագրի ԴԳ համակարգի արդյունավետությունը նաեւ բյուջետային աջակցության պայմանների միջոցով ստուգելու համար:

Յուրաքանչյուր տարեկան փոփոխական տրանշի հատկացմանը վերաբերող պայմանների համապատասխանությունը ստուգելու նպատակով իրականացվում են արտաքին վերանայման առաքելություններ: Սրանք ենթադրաբար տեղի կունենան յուրաքանչյուր տարվա 2-րդ եռամսյակում՝ սկսած 2018 թվականից, եւ կֆինանսավորվեն սույն ծրագրով: Յուրաքանչյուր պայմանի իրականացման կարգավիճակը կներկայացվի Ղեկավար կոմիտեի նիստի ժամանակ:

Սույն գործողության ամենօրյա տեխնիկական եւ ֆինանսական մոնիթորինգը շարունակական գործընթաց կլինի եւ կկազմի իրականացնող գործընկերոջ պարտավորությունների մի մասը: Այս նպատակով իրականացնող գործընկերը գործողության համար սահմանում է ներքին, տեխնիկական եւ ֆինանսական մշտական մոնիթորինգի համակարգ եւ կազմում է առաջընթացի վերաբերյալ պարբերական (առնվազն տարեկան) հաշվետվություններ եւ

վերջնական հաշվետվություններ: Յուրաքանչյուր հաշվետվություն տրամադրում է ճշգրիտ նկարագրություն՝ գործողության իրականացման, ի հայտ եկած դժվարությունների, կատարված փոփոխությունների, ինչպես նաև գործողության՝ գրանցված արդյունքների (արդյունքների եւ ուղղակի արդյունքների)՝ համապատասխան ցուցանիշներով չափված աստիճանի վերաբերյալ՝ որպես հղում օգտագործելով տրամաբանական կառուցվածքի մատրիցան (որպես ծրագրի միջոց) կամ արդյունքների ցուցանիշների ցանկը (բյուջետային աջակցության համար): Հաշվետվությունը կազմվում է այնպես, որ հնարավոր լինի իրականացնել գործողության համար նախատեսված եւ կիրառված միջոցների եւ բյուջետային տվյալների մոնիթորինգ: Նկարագրական եւ ֆինանսական վերջնական հաշվետվությունը կընդգրկի գործողության իրականացման ամբողջ ժամանակահատվածը:

Հանձնաժողովը կարող է իրականացնել ծրագրի մոնիթորինգի լրացուցիչ այցեր եւ՝ իր սեփական անձնակազմի, եւ՝ անմիջականորեն Հանձնաժողովի կողմից մոնիթորինգի անկախ վերանայումների համար աշխատանքի ընդունված (կամ Հանձնաժողովի կողմից այդպիսի վերանայումներ իրականացնելու համար լիազորված պատասխանատու գործակալի կողմից աշխատանքի ընդունված) անկախ խորհրդատուների միջոցով:

Միջանկյալ եւ (կամ) վերջնական գնահատման անհրաժեշտությունը հաշվի կառնվի ըստ ծրագրի պահանջների եւ, համընկնումներից, առկա խնդիրների նույնանման վերհանումներից խուսափելու համար:

## 2.7. Գնահատումը

Հաշվի առնելով գործողության ծրագրի կարելիությունը՝ այդ գործողության ծրագրի կամ դրա բաղադրիչների համար կիրականացվի միջանկյալ կամ վերջնական գնահատում այն անկախ խորհրդատուների կողմից, որոնց հետ Հանձնաժողովը պայմանագիր է կնքել:

Դրանք	կիրականացվեն	տարբեր	մակարդակներում
-------	--------------	--------	----------------

հաշվետվողականության եւ ուսուցման, այդ թվում՝ քաղաքականության մշակման նպատակով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծրագրի արդյունքների, դրանց կայունության եւ այլ բնորոշ հատկանիշների վրա, որոնցով իրականացվում է միեւնույն ծրագրի գնահատումը՝ կրկնօրինակումից խուսափելու համար:

Հանձնաժողովն առնվազն 30 օր առաջ իրականացնող գործընկերօրջը տեղեկացնում է գնահատման առաքելությունների իրականացման համար նախատեսված ամսաթվերի մասին: Իրականացնող գործընկերը խելամիտ եւ արդյունավետ կերպով համագործակցում է գնահատման հարցերով փորձագետների հետ եւ, մասնավորապես, նրանց տրամադրում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները եւ փաստաթղթերը, ինչպես նաեւ ապահովում է սենքերի եւ աշխատանքների հասանելիությունը:

Գնահատման հաշվետվությունները տրամադրվում են գործընկեր երկրին եւ մյուս հիմնական շահագրգիռ կողմերին: Իրականացնող գործընկերը եւ Հանձնաժողովը վերլուծում են գնահատման եզրակացություններն ու առաջարկությունները եւ, անհրաժեշտության դեպքում, գործընկեր երկրի հետ համաձայնության գալով՝ համատեղ որոշում են կայացնում հետագայում ձեռնարկվելիք գործողությունների եւ ցանկացած անհրաժեշտ փոփոխության, այդ թվում՝ ծրագրի ուղղվածության վերափոխման վերաբերյալ, եթե այդ մասին նշվում է:

## **2.8. Աուդիտը**

Հանձնաժողովը, առանց սույն գործողության ծրագրի իրականացման համար կնքված պայմանագրերի նկատմամբ կիրառելի պարտավորությունները սահմանափակելու, կարող է դիսկերի գնահատման հիման վրա պայմանագիր կնքել անկախ աուդիտ կամ ծախսերի ստուգում իրականացնելու առաջադրանքների վերաբերյալ՝ մեկ կամ մի քանի պայմանագրերի կամ համաձայնագրերի մասով:



## **2.9. Հաղորդակցումը եւ տեսանելիությունը**

ԵՄ հաղորդակցումն ու տեսանելիությունն իրավական պարտավորություն է ԵՄ կողմից ֆինանսավորվող բոլոր արտաքին գործողությունների ծրագրերի համար:

Սույն գործողության ծրագիրը ներառում է հաղորդակցման եւ տեսանելիության միջոցառումներ, որոնք հիմնված են Գործողության հաղորդակցման եւ տեսանելիության հատուկ ծրագրի վրա, որը պետք է մշակվի իրականացման սկզբում եւ աջակցություն ստանա վերը նշված 2.4 բաժնում նշված բյուջեից:

Հաղորդակցման եւ տեսանելիության իրավական պարտավորությունների առումով միջոցառումներն իրականացվում են Հանձնաժողովի, գործընկեր երկրի, պայմանագրի կողմերի, դրամաշնորհի շահառուների եւ (կամ) լիազորված անձանց կողմից: Ֆինանսավորման համաձայնագիրը, գնման եւ դրամաշնորհային պայմանագրերը եւ պատվիրակությունների պայմանագրերը, համապատասխանաբար, ներառում են համապատասխան պայմանագրային պարտավորություններ:

Եվրոպական Միության արտաքին գործողությունների համար նախատեսված «Իրազեկում եւ տեսանելիություն» ձեռնարկն օգտագործվում է Գործողության՝ հաղորդակցում եւ տեսանելիություն ծրագիրը եւ համապատասխան պայմանագրային պարտավորությունները սահմանալու համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՑԱՆԿԸ

Արդյունքների ցուցանիշների ցանկում ներառված ներդրումները, ակնկալվող ուղղակի եւ անուղղակի արդյունքներն ու բոլոր ցուցանիշները, թիրախներն ու ելակետային ցուցանիշները կողմնորոշիչ են եւ կարող են թարմացվել գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում՝ առանց ֆինանսավորման որոշման մեջ փոփոխություն կատարելու: Արդյունքների ցուցանիշների կողմնորոշիչ ցանկն ընդգրկող աղյուսակը կենթարկվի փոփոխության գործողությունների ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում. կավելացվեն նոր սյունակներ՝ միջանկյալ թիրախների (ուղենիշների) համար՝ անհրաժեշտության դեպքում, եւ ցուցանիշների հիման վրա արդյունքներին հասնելու մասին հաշվետվության նպատակով: Կարելի է նշել նաեւ այն, որ ցուցանիշները պետք է տարբերակել ըստ սեռի, այն դեպքում, երբ անհրաժեշտ է դիտարկել կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականությունը:

	Արդյունքների շղթա	Ցուցանիշներ	Ելակետեր	Թիրախներ	Ստուգման աղբյուրներ եւ միջոցներ
<b>ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ</b>					
<b>Ընդհանուր նպատակը</b>	Հայաստանի կենտրոնական հանրային կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության եւ արդյունավետության	1. Համաշխարհային բանկի արդյունավետ կառավարման ցուցանիշներն են. ա) Ձայնի իրավունք եւ	1. 2014 ա) 30.5 բ) 46.2 գ) 60.1	1. ՀԲ-ի ցուցանիշները. ա) 64(2017), 75 (2021) * բ) 62 (2017), 75 (2021) * գ) 75 (2017), 85 (2021)	ԵԲԻԳ վարկանիշ  ՀԲ-ի, ՏՀԶԿ-ի, ՍԻԳՄԱ-ի, ԵԽ-ի

	բարձրացում՝ ելնելով քաղաքացիների եւ գործարարության կարիքներից	<p>հաշվետվողականություն,</p> <p>բ) Կառավարության արդյունավետություն,</p> <p>գ) Կարգավորման որակ,</p> <p>դ) Կոռուպցիայի վերահսկողություն</p> <p>2. Երկրի քաղաքականության եւ ինստիտուցիոնալ գնահատման՝ (ԵԲԻԳ) հետեւյալի մասով վարկանիշը. ա) հանրային հատվածի կառավարում եւ հաստատություններ, բ) հանրային կառավարում, գ) թափանցիկություն, հաշվետվողականություն, կոռուպցիա</p>	<p>դ) 40.4</p> <p>2. 2013</p> <p>ա) 3.70</p> <p>բ) 3.50</p> <p>գ) 3.50</p>	<p>* դ) 58 (2017), 70 (2021)</p> <p>* * Հայաստանի զարգացման ռազմավարություն 2014-25</p> <p>2. ԵԲԻԳ Բարելավում վարկանիշներում (2020 թվական)</p>	<p>զեկույցներ</p> <p>Ծրագրի մոնիթորինգ Գնահատականներ</p>
<b>ԱՐԴՅՈՒՆՔ</b>					
<b>Հատուկ նպատակ</b>	<b>Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում</b>	Իրավակարգավորման բարեփոխումների ճանապարհային	0 [2016]	Իրականացման գործում բարելավում ( <b>գնահատման</b> ենթակա %)	ՏՀԶԿ-ի եւ Համաշխարհային բանկի՝ մոնիթորինգի

1	<b>քաղաքականության ու օրենսդրության մշակման եւ համակարգման խթանում</b>	քարտեզի եւ ՀԲ-ի՝ քաղաքականության մշակման ծրագրի իրականացման %-ը		[2020]	արդյունքների մասին զեկույցներ  Անկախ վերլուծության վերաբերյալ հաշվետվություն
<b>Հատուկ նպատակ 2</b>	Քաղաքացիական ծառայությունում պրոֆեսիոնալիզմի բարձրացում եւ արդյունավետ գործունեության ապահովում	Քաղաքացիական ծառայության բարեփոխումների ռազմավարության իրականացման %-ը	0[2016]	Իրականացման գործում բարելավում (գնահատման ենթակա %) [2020]	Կառավարության եւ Քաղաքացիական ծառայության խորհրդի՝ մոնիթորինգի արդյունքների մասին զեկույց  Անկախ վերլուծության վերաբերյալ հաշվետվություն
<b>Հատուկ նպատակ 3</b>	Հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարեվարքության եւ հրապարակայնության մակարդակի բարձրացում	Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) երրորդ եւ չորրորդ Գործողությունների ծրագրի իրականացման %-ը	ԲԿԳ 2014-2016 գործողությունների ծրագիր իրականացման տոկոսը՝ որի ընդհանուր 11 թիրախներից իրականացվել են 3-ը, էապես իրագործվել է	ԲԿԳ-ի 2016-2018 եւ 2018-2020 թվականների գործողությունների ծրագրի թիրախների 80%-ն իրականացվել են, այդ թվում՝ հանրային կառավարման համակարգում բարեարքության	ԲԿԳ-ի գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ զեկույցներ  Անկախ վերլուծության վերաբերյալ

			Լ-ը, մասամբ իրագործվել են 6-ը, սկսված չէ 1-ը [2016]	մակարդակի ու կոռուպցիայի դեմ պայքարի մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունները [2018] [2020]	հաշվետվություն
<b>Հատուկ նպատակ 4</b>	<b>Էլեկտրոնային կառավարման միջոցով հանրային ծառայությունների մատուցման բարելավում</b>	Այն ոլորտների թիվը, որոնցում որակյալ էլեկտրոնային ծառայություններ են մատուցվում	2 (էլ. հարկ եւ էլ. կաբինետ) ][2016]	Մշակված որակյալ ծառայությունների թվի ավելացում [2020]	Կառավարության զեկույցներ
<b>Հատուկ նպատակ 1-ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում այնպիսի քաղաքականության ու օրենսդրության մշակման եւ համակարգման խթանում</b>					
<b>ՀՆ 1.1</b>	Կենտրոնական հանրային կառավարման մակարդակում քաղաքականության ու օրենսդրական պլանավորման եւ համակարգման բարելավված կարողություններ	1) Այնքանով, որքանով իրականացվում է միջգերատեսչական եւ հանրային քննարկումների գործընթացը, 2) ՀՏՖ-ի Քաղաքականության մշակման գործընթացի թափանցիկության ինդեքսը, 3) համատեղ ստեղծման մոտեցումների միջոցով ստեղծված եւ իրականացված	1) ենթակա պատրաստման [2016] 2) 4.3 (3) 0 [2014]	1) Ավելացում 2) Ավելացում 3) Ավելացում [2020]	Անկախ վերլուծության վերաբերյալ հաշվետվություն  ՀՏՖ-ի զեկույց

		քաղաքականությունների տոկոսը			
ՀՆ.1.2	Ներառական եւ փաստերով հիմնավորված քաղաքականության մշակման համար կարողությունների բարելավում	1) Քաղաքականության մշակման փաստաթղթերի տոկոսը (ռազմավարություններ, գործողությունների ծրագրեր, ծրագրեր), որը տարեկան կտրվածքով մոնիթորինգի է ենթարկվում ԴԳ համակարգի հիման վրա եւ որի վերաբերյալ հրապարակայնորեն ներկայացվում են հաշվետվություններ, այդ թվում՝ սեռի տարբերակման վերաբերյալ տվյալներ եւ վերլուծություններ, 2) ազդեցության գնահատման ընդունված եւ օգտագործված մեթոդաբանություն ու կենտրոնական հանրային կառավարման	1) ելակետային տվյալները պատրաստվելու են ԵՄ շարունակական աջակցությամբ, 2) ազդեցության գնահատման պահանջն առկա է, սակայն մեթոդաբանությունն ընդունված չէ	1) 80%, 2) ԵՄ լավագույն գործելակերպին համապատասխան հաստատված մեթոդաբանություն, համապատասխան վերապատրաստման մշակված մոդուլ եւ վերապատրաստված համապատասխան քաղաքացիական ծառայողներ եւ ազդեցության իրականացված գնահատումներ [2020]	Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց, ճյուղային նախարարությունների զեկույցներ, ՏԳ ընթացիկ զեկույց

		համակարգի անձնակազմի՝ գնահատումներ պատրաստելու կարողություն:			
<b>Հատուկ նպատակ 2-ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.</b> Քաղաքացիական ծառայությունում պրոֆեսիոնալիզմի բարձրացում եւ արդյունավետ գործունեության ապահովում					
<b>ՀՆ 2.1</b>	Մարդկային ռեսուրսների կառավարման ավելի մասնագիտացած եւ արժանիքների վրա հիմնված համակարգի առկայություն, որը նպաստում է քաղաքացիական ծառայությունում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանը	1) Համալրված թափուր տեղերի եւ առաջխաղացման տոկոսը՝ կարողությունների վրա հիմնված աշխատանքի ընդունման եւ ընտրության նոր կարգավորումների համաձայն, որոնք պետք է ընդունվեն «Քաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքի շրջանակներում, 2) պաշտոնի անձնագրի տոկոսը՝ պաշտոնի դասակարգման համակարգին համապատասխան,	1) 0%, քանի որ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագիծը ընդունվելու է 2016 թվականին, 2) 100% պաշտոնի անձնագիրը կազմվել է պաշտոնների ներկայիս համակարգի համաձայն եւ 0%՝ պաշտոնների նոր համակարգի համաձայն (3-ը եւ 4-ը կգնահատվեն 2016 թվականի ընթացքում)	1) 100%, 2) 100% [2020]	Քաղաքացիական ծառայության խորհրդի մոնիթորինգի արդյունքների մասին զեկույց, Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց, ՏԳ ընթացիկ զեկույց

		3) քաղաքացիական ծառայությունում ավելի շատ կանանց և տղամարդկանց հավասարակշռության հաստատումը եւ համապատասխան ղեկավար պաշտոնները, 4) թարմացված եւ ընդունված դասակարգման համակարգը			
ՀՆ 2.2	Քաղաքացիական ծառայողների պատրաստման եւ կարողությունների զարգացման ավելի արդիական հնարավորությունների առկայություն՝ համակցված մարդկային ռեսուրսների՝ կանանց և տղամարդկանց առումով հավասարակշռված պլանավորման, կատարողականի գնահատման եւ	1) Մարդկային ռեսուրսների վերաբերյալ ընդունված ծրագրերով հանրային կառավարման տոկոսը, 2) ՎԿԳ-ի (Վերապատրաստման կարիքների գնահատման) հիման վրա իրականացված վերապատրաստումների տոկոսը	1) 0%, 2) 0% [2016]	1) 100%, 2) 100 [2020]	Քաղաքացիական ծառայության խորհրդի մոնիթորինգի արդյունքների մասին զեկույց, Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց, ՏԳ ընթացիկ զեկույց



	առաջխաղացման համակարգի հետ				
<b>Հատուկ նպատակ 3-ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.</b> Հանրային կառավարման ոլորտում հաշվետվողականության, բարելավելության եւ հրապարակայնության մակարդակի բարձրացում					
<b>ՀՆ 3.1</b>	Հանրային կառավարման նկատմամբ քաղաքացիների վստահության ավելի բարձր մակարդակ	1) Տվյալ տարվա ընթացքում պետական մարմինների կողմից հանրային տեղեկատվության տրամադրման հարցումը մերժելը, 2) այն չափը, որն օրենսդրությամբ սահմանված է հանրային տեղեկատվության հասանելիության իրավունքի համար եւ որքանով է այն կիրառվում գործնականում 3) քաղաքացիների այն տոկոսը, որոնք վստահել են Օմբուդսմենին, 4) այն չափը, որով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն հետընտրական	1) 2) 3) կետերը ենթակա են գնահատման [2016 թվական] 4) Օրենք [2013 թվական]	1) նվազեցումը ենթակա է գնահատման, 2)-ի, 3)-ի բարձրացումը ենթակա է գնահատման [2020 թվական],	4) Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հաշվետվություններ, անկախ վերլուծության վերաբերյալ հաշվետվություն, (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրական գործընթացի դիտորդական առաքելության վերջնական զեկույց

		հաշվետվություններով գնահատվում են հանրային վստահությունն ընտրական գործընթացի օրինականության վերաբերյալ			
<b>ՀՆ 3.2</b>	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին եւ էթիկայի հարցերով այլ հանձնաժողովներին ցուցաբերվող աջակցության միջոցով հանրային ոլորտում բարեվարքության ավելի բարձր մակարդակ	1) Էթիկայի հանձնաժողովի հաղորդումների վրա հիմնված՝ Գլխավոր դատախազության կողմից քննված գործերի թիվը (ռիսկերի վերլուծության մեթոդաբանություն)	1) զրո [2016 թվական]	1) Ինչպես գնահատվել է միջազգային փորձագետների կողմից, ռիսկերի գնահատման մասին հաշվետվությանը համահունչ [2020 թվական]	Էթիկայի հանձնաժողովի զեկույցներ, Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց, ՏԳ ընթացիկ հաշվետվություն
<b>ՀՆ.3.3</b>	Տեղեկատվության հասանելիության եւ անձնական տվյալների նկատմամբ հսկողության մասով քաղաքացիների իրավունքների ընդլայնում	1) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 2015 թվականի օրենքի կիրառումը, 2) Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կարողությունները եւ դրա անկախությունը	1) Մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվություն առկա չէ, 2) 36 000 եվրո կազմող բյուջե 7 անձնակազմով եւ գործակալությամբ՝ Արդարադատության	1) Մոնիթորինգի վերաբերյալ հրապարակված տարեկան հաշվետվությունը եւ էլեկտրոնային մոդուլը, որոնք մշակվել են ապահովելու էլեկտրոնային տեղեկատվական	Անձնական տվյալների պաշտպանության գործակալության զեկույց, Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց, հաստատված բյուջե

			նախարարության վերահսկողության ներքո [2016 թվական]	ինքնորոշման եւ անձնական տվյալների հսկողության մասով քաղաքացիների իրավունքը, 2) Բյուջեն (2019 թվական) եւ ՄԾԾ-ն (2019-2021 թվականներ) համահունչ են գործակալության Թվինինգ առաջարկությանը եւ գործունեության անկախությանը՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա [2018 թվական]	եւ ՄԾԾ, ՏԳ ընթացիկ հաշվետվություն
<b>Հատուկ նպատակ 4-ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Էլեկտրոնային կառավարման միջոցով հանրային ծառայությունների մատուցման բարելավում</b>					
<b>ՀՆ.4.1.</b>	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի կարողությունների ընդլայնում	ԷԿԵՆԳ-ի բյուջեն (Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ) եւ կարիքների գնահատում	Բյուջե [2016 թվական] եւ կարիքների գնահատում	Բյուջեի ընդլայնում եւ ԷԿԵՆԳ-ի կառուցվածքի՝ տեխնիկական աջակցության միջոցով ամրապնդում [2020 թվական]	Հաստատված բյուջե, Տեխնիկական աջակցության վերաբերյալ զեկույց
<b>ՀՆ.4.2</b>	Կառավարության կողմից Էլեկտրոնային նույնականացման քարտով	1) ՄԱԿ-ի Պետական կառավարման ցանցի Էլեկտրոնային	1) 61 (Էլեկտրոնային կառավարման պատրաստվածության	1) Բարելավված դասակարգում 2) Այն ծառայությունների	ՄԱԿ-ի Պետական կառավարման ցանցի եւ Թրանսփարենսի

	տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների ներմուծում եւ վերանայված համապատասխան վարչական ընթացակարգեր	կառավարման պատրաստվածության ցուցանիշը եւ Թրանսփարենսի ինթերնեշնլ (ԹԻ) [հակակոռուպցիոն կենտրոնի] կոռուպցիայի ընկալման ցուցանիշը, 2) անմիջապես քաղաքացիների շահերից բխող՝ էլեկտրոնային նույնականացման քարտի օգտագործմամբ՝ մշակված էլեկտրոնային ծառայությունների թիվը, 3) Այն մեծահասակ բնակչության տոկոսը, որն ունի էլեկտրոնային նույնականացման քարտ	ցուցանիշը) [2014 թվական], 94 (ԹԻ ցուցանիշը), 2) 2 մշակված էլեկտրոնային ծառայություն (էլեկտրոնային հարկ եւ էլեկտրոնային կաբինետ) [2015 թվական], 3) 20% [2016 թվական]	թիվը, որոնք կապված են նույնականացման քարտերի հետ, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով բնակության իրավունքի տրամադրման ծառայությունը, 3) Հայաստանի բնակիչների 90 տոկոսը [2020 թվական]	Ինթերնեշնլի ցուցանիշ, Տեխնիկական աջակցության զեկույցներ, ԷԿԵՆԳ-ի զեկույցներ, Վերանայման առաքելության գնահատման մասին զեկույց
<b>ՀՆ.4.3</b>	Առողջապահության ոլորտում կառավարության կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների ներմուծում եւ վերանայված համապատասխան վարչական	1) Առողջապահական հաստատությունների կառավարման կարողությունները, 2) Քաղաքացու թվային բժշկական քարտը, 3) Թվային էկոհամակարգ, որը պահանջվում է	1) Գոհունակության հարցում (ենթակա է գնահատման), 2) գոյություն չունեցող, 3) գոյություն չունեցող, 4) 6 հաստատություն, որոնք ունեն էլեկտրոնային	1) գոհունակության բարձրացում՝ շնորհիվ բժշկական հաստատություններում կառավարման փոփոխության, որտեղ ներդրվել է էլեկտրոնային առողջապահության	Առողջապահության նախարարության ու Առողջապահության Ազգային Ինստիտուտի եւ ԷԿԵՆԳ-ի զեկույցներ, Վերանայման

	ընթացակարգեր	Էլեկտրոնային առողջապահության կառավարման մոդուլի գործելու համար 4) Էլեկտրոնային առողջապահության կառավարման այն մոդուլների թիվը, որոնք գործում են եւ ինտեգրվել են Էլեկտրոնային կառավարման համակարգում	առողջապահության կառավարման մոդուլ [2016 թվական]	կառավարման մոդուլը եւ իրականացվում են ստանդարտ գործառնական ընթացակարգեր, 2) Հայաստանի այն բոլոր քաղաքացիները, որոնք դիմել են բժշկական աջակցության համար, ունեն թվային բժշկական քարտ, ինչպես նաեւ ապահովվում է առողջապահական հաստատությունների միջեւ փոխգործակցությունը, 3) Էլեկտրոնային առողջապահության հիմնական ստանդարտները ընդունվել են եւ կիրառվում են (HL7 շրջանակի հիման վրա), առկա են հիվանդությունների, թմրադեղերի, բուժանձնակազմի եւ բժշկական հաստատությունների հիմնական	առաքելության գնահատման մասին զեկույց, Տեխնիկական գնահատման հաշվետվություն
--	--------------	--	---	--	---

				գրանցամատյանները, ինչպես նաեւ թվային նշանակման մոդուլը, 4) պետական հիվանդանոցների, մասնագիտացված հիվանդանոցների եւ դեղագործների թիվը՝ գործող էլեկտրոնային առողջապահության կառավարման մոդուլով [2020 թվական]	
--	--	--	--	--	--